

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ... ՀԵՏՔԵՐՈՎ

Մ. Ն. ՀԱԿՈՐՅԱՆ

«Արևելք» (1855—1856) և «Արևմուտք» (1859, 1864) ազատամիտ պար-
քերականների խմբագրի Ստեփան Ոսկանյանի կյանքն ու գործունեությունը
դեռ նրա կենդանության օրոք մեծ հետաքրքրություն է պատճառել ժամանա-
կակիցներին, իսկ նրա մահվանից հետո նաև բանասերներին ու պատմաբան-
ներին: Առանձին դեպքերում այդ հետաքրքրությունը վեր է ածվել բուռն պայ-
քարի¹:

Այս վերջին առումով պերճախոս է տակավին ուշադրության շարժանցած
այն փաստը, որ Ոսկանյանի հակառակորդները դավեր են նյութել ընդդեմ
«Արևելքի» և նրա խմբագրի: Հայտնի է, թե ինչպիսի նենգ քայլերի է դիմել
Գ. Այվազովսկին, որպեսզի խափանի «Արևելքի» 15-րդ համարում տպագրելու
համար նախատեսվող Ոսկանյանի հոդվածը: Տպարանում ծանոթանալով շար-
վածքին, նա անմիջապես դիմել է մեծատուններին և հասել այն բանին, որ
տպարանին ստիպել են այլևս չտպագրել «Արևելքը»: Բայց նա դրանով չի
բավարարվել: Վստահ չլինելով, որ կկարողանա լիովին խափանել իր և Պողոս
Տատյան մեծահարուստի դեմ ուղղված հիշյալ հոդվածի հրապարակ գալը,
Գ. Այվազովսկին, Ոսկանյանին մտերիմ մարդկանց միջոցով նրա վրա ազ-
դելու փորձերից բացի (դա լուկ ժամանակ շահելու համար էր արվում), հատուկ
առաջադրանքով իր համախոհներից Ամբրիոսիոս Գալֆայանին (հետագայում
իշխան Գվիդոն Լուսինյան) ուղարկում է Պոլիս: Սա շուտով հեղափոխում է
պարբերականի գործակալին. «Երկուքն ալ խոսք կուտան, խոսք կառնուն, որ
եթե Արևելքը ուրիշ տեղ մը տպվի և իր մեղավոր հոդվածով Պոլիս ղրկվի,
ժրարները սուրհանդակեն առնվին՝ և այն թիվը պահեն, չհրատարակեն»²: Այ-
վազովսկու գործակալը Կ. Պոլսից հայտնում է նաև, որ Ոսկանյանի պատաս-
խան հոդվածը չի տարածվի, որ պետք է բռնադատվին անհոգ ըլլալ այս կողմեն»:
Չի բացառվում, որ մամուլի պատմության մեջ աննախագես պայսիսի
«անիրավություն», ինչպես որակում է Ստ. Ոսկանյանը, Այվազովսկին ձեռ-
նարկած լինի նաև այլ վայրերում: Իսկ ի՞նչ քայլերի նա դիմած կլինե՞ր բուն
Փարիզում:

¹ Բանը հասել է այնտեղ, որ «Բազմավեպի» հրատարակողներն Ոսկանյանի մահվան առթիվ
գրած երկտողում իրենց թույլ են տվել ամսագրի 1901 թ. ապրիլյան համարի ջապիկի 4-րդ
էջում դրոշմելու, թե «հանգուցյալը երիտասարդ հասակին մեջ իր Արևելք լրագրով գրեկա՞ն
ուրիշ մը հանդիսանալու համար որքա՞ն ճիգ թափեր է»: Այդ արտառոց վրեժխնդրությունը առա-
ջացրել է ցասկոտ բողոք: Տե՛ս Լեոյի նամակը «Մուրճին» 1901 թ. № 4-ում և «Բյուզանդիոնին»
1901 թ. №№ 1376, 1381, «Սուրհանդակին» համարները: Ի դեպ, Ոսկանյանի դեմ գրված նյու-
թերի շարքում, եթե մեզմ արտահայտվելու լինենք, պակաս արտառոց չէ՞ Մ. Մամուրյանի հոդվածը՝
«Արևելյան մամուլին» 1871 թ. 7-րդ համարում: Այսօր էլ դժվար է առանց վրդովմունքի կարդալ
այդ հոդվածում ճանաչված խմբագիր-հրապարակախոսի թույլ տված վիրավորանքները՝ Ոսկան-
յանի հասցեին:

² Տե՛ս «Արևմուտք», 1859, № 17, էջ 134:

Վերհիշենք նաև մի հայտնի փաստ. հրապարակախոսի հակառակորդները Պոլսում պատերի վրա փակցրել էին մի թուղթիկ, որտեղ նրան անվանարկում էին որպես «անարգ և մոլեռանդ օտարազգի», իսկ նրա «Արևմուտք» պարբերականը որակում «գոթխային անիծյալ թերթ»։ Հավանաբար դա այն նույն ազդն էր, որ զետեղվել էր նաև «Մեղուի» 1859 թ. 18-րդ համարում և որը կոչ էր անում «Արևմուտքը» ալրել, փոշի դարձնել, որպեսզի ուրիշ մեկն ալ անոր ոճեն կամ հանդգնաբար զրուցվածքեն շխարվի»։ Ինչպես միշտ, այս անգամ նույնպես Ոսկանյանը հպարտ ու կրակոտ պատասխան է տվել իր հակառակորդներին։

Ստ. Ոսկանյանի շուրջը ծավալված բանավեճերն այսօր էլ չեն մարել։ Տակավին շարունակվում է հետաքրքրությունը դեպի նրա գրավոր ժառանգությունը, իբրև արդիական արժարժվում են նրա մի շարք գաղափարները։ Բնորոշ է, օրինակ, խորեն Գաբրիելյանի հոգվածը, որ հրատարակվել է Բեյրութում լույս տեսնող «Ամենուն տարեգրքի» 1955 թ. հատորում։ Ոսկանյանի հրապարակախոսությունից որոշակի միտումով արվող ընդարձակ քաղվածքներից հետո, ահա ինչ է գրում հեղինակը. «Հարյուր տարի ետքը, այսօր ալ, Ոսկանի հոգվածները կպահեն իրենց այժմեությունը տերության և եկեղեցիի սահմաններուն, վարիչներու և եկեղեցականներու պարտավորության մասին» և ապա՝ «իր գաղափարները... ինքնատիպ արտահայտությամբ կպահեն կենդանի շունչ մը և թարմություն մը նաև այսօր»³։

Ոսկանյանի հրապարակախոսությունն, իրոք, դեռևս չի կորցրել իր նշանակությունը, բայց բնավ ոչ այն առումով լոկ, որ առանձին հարցերի առիթով տողամեջ ակնարկում է Գաբրիելյանը։ Ոսկանյանը բացառիկ տեղ ունի հայ հասարակական մտքի պատմության մեջ և մեծ էր նրա ազդեցությունն իր ժամանակին, հայտնի չափով նաև հետագայում, ինչպես վկայում են փաստերը։ Դրա համար էլ հիմնադրել է այն կարծիքը, թե Ոսկանյանի «միտքը չէ կրցած որևէ ազդեցություն հառաջ բերել և կամ եթե բերած է այն ալ որևէ օգտակարություն չէ ունեցած իր ազգին համար»⁴, ինչպես և դժվար է համաձայնել այն կտրուկ պնդումների հետ, թե «Ոսկանյանի հրապարակախոսությունը, անգործնական և վերացական, ժողովրդից ու հողից կտրված, հանդիսացավ ջերմոցային մի տունկ, որը թողնեց տարածամ, չթողնելով արևմտահայ հասարակական մտքի պատմության մեջ ազդեցության խոր հետք»⁵։

Չնայած Ոսկանյանին նվիրված ծավալուն և արժեքավոր ուսումնասիրությունների առկայությանը⁶, հայ հասարակական մտքի այդ նշանավոր ներկայացուցիչ, Մ. Նալբանդյանի արևմտահայ արժանավոր գիտնական կյանքի և գործունեության շատ էջեր մնում են չպարզաբանված, կարևոր մի շարք խնդիրներ դեռևս չեն լուծված։ Դրա պատճառը սոսկ նյութի բացակայությունը չէ, այլ նաև չպարզված հարցերն ուսումնասիրության առարկա չդարձնելը, թեև

³ «Ամենուն տարեգրք», Բեյրութ, 1955, էջ 131 և 134։

⁴ «Մարմարա», 1947, 12-ին դեկտեմբերի։

⁵ Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1960, հ. 1, էջ 320։

⁶ Լեո, Ստեփան Ոսկան, «Մուրճ», 1901, № 11, 12, Հր. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, և «Մարմարա», 1947, դեկտեմբերի 7-ին և 12-ին, Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1955, հ. 1, Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1960, հ. 2 և այլն։

դրանց շուրջը բանավեճ է մղվում: Այդ հարցերն արմատական նշանակություն ունեն Ոսկանյանի ճշգրիտ և ամբողջական գնահատության համար: Տակավին չեն հայտնաբերված նրա հրատարակած «Արևմուտքի» 1859-ից հետո լույս տեսած համարներից ոչ մեկը, ինչպես նաև «L'Italie» (1861), «La Reforme» (1867—1901) ֆրանսերեն թերթերը⁷: Մինչև օրս անհայտ էին Ոսկանյանի երկու ֆրանսերեն պամֆլետները՝ «Auguste Comte a Smyrne et l'Athéisme» (1878) և «M. E. Littré et l'Athéisme» (1879), որոնք, հրապարակ գալու օրից առ այսօր, մեծ հետաքրքրություն են պատճառում⁸: Պատշաճ ուշադրության չեն արժանացել Ոսկանյանի ուրիշ երկու պամֆլետները՝ «Ներքին համոզում» (1853) և «Հոռմեական պարզեցում» (1854), որոնք նա լույս է ընծայել անստորագիր, և որոնք լիակատար գաղափար են տալիս հրապարակախոսի վաղ շրջանի գործունեության մասին⁹: Հակառակ հարցի սկզբունքային կարևորությունը դեռևս անբավարար է ուսումնասիրված Ստ. Ոսկանյանի և Մ. Նալբանդյանի միմյանց վրա ունեցած ներգործությունը, ինչպես և առաջինի ազդեցությունը իր ժամանակակիցների վրա¹⁰:

Ինչպես տեսնում ենք, Ստ. Ոսկանյանի կյանքն ու գործունեությունը խոպան հրապարակներ տակավին շատ ունի: Հարկ է դեռ շատ բան պարզել, ճշտել որոշ դրույթներ: Ուստի, միանգամայն օրինական են նրա հետքերով

7 «Արևմուտքի» վերջին համարներից ընդօրինակված հոդվածներից օգտագործել է Աշոտ Հովհաննիսյանն իր վերահիշյալ աշխատության մեջ (հ. 1, էջ 314): Դրանցից ընդարձակ քաղվածքներ է կատարել նաև Ռ. Որբերյանը՝ «Մասիսի» 1901 թ. № 15-ում հրատարակված իր հոդվածում: Ինչ վերաբերում է «La Reforme» թերթին, ապա նրա մասին որոշ գաղափար են տալիս այնօրյա հայ մամուլում տպագրված որոշ նյութեր ու քաղվածքներ՝ մասնավորապես «Քրուդանդիտի» 1901 թ. № 1376-ի, «Արևելյան մամուլի» 1871 թ. մի շարք համարների, «Հայրենիք» թերթի 1894 թ. մարտի 23-ի համապատասխան նյութերը: Մեր ձեռքի տակ կա, թերթի 1870 թ. հունվարի 1/13-ի համարում անվերնագիր տպագրված մի հոդվածի թարգմանության ընդօրինակությունը, որտեղ ցասկոտ բողոք է հայտնվում գործավորների ու բռնակիրների ընտանիքների դեմ կիրառվող անլուր հալածանքների դեմ: «Կառավարությունը,— ասված է այդ հոդվածում,— պարտավոր է անոնց ապահովություն և պաշտպանություն ընծայելու, անոնց, որոնց կյանքը հնարավոր չի դառնար երբեք: Հրամանները, որչափ ալ խիստ ըլլան, չեն բավեր»:

8 Երկարատև որոնումներից հետո մեզ հաջողվել է արտասահմանյան մի մատենադարանից ստանալ այդ բրոշյուրները, որոնք պատճենահանելուց հետո ետ ենք վերադարձրել: Հույս ունենք, առաջիկայում հրատարակել դրանց առթիվ գրած մեր ուսումնասիրությունը՝ «Գալուստ Կոստանդյանը, Ստեփան Ոսկանյանը և էմիլ Լիթրեն» խորագրով:

9 Մինչև վերջերս այդ պամֆլետներն Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում տեղադրված էին ըստ անվանումների: Թերևս այդ է եղել պատճառը, որ դրանք ուշադրությունից վրիպել են: Այժմ դրանց տեղը մատենագիտական առումով ճշգրտված է:

10 Այս իմաստով թվում է ապարդյուն չի լինի Ոսկանյան հրապարակախոսի որոշ ազդեցության որոնումը մեծ երգիծաբան Հ. Պարոնյանի երկերում: Դրա երաշխիքն է Հակոբ էֆենդի Կոճիկյանի մասին երկուսի գրած երգիծաբանական գործերի համադրման հետաքրքրական արդյունքը: «Արևմուտքի» 1859 թ. 5-րդ և 7-րդ համարներում Ոսկանյանի ուրվագծած փիլիսոփամետաքսարան-աստվածաբան-խրատատու էֆենդու երգիծական դիմապատկերում կարելի է գտնել այն սուր երգիծանքի նախասաղմը, որ առկա է Հ. Պարոնյանի կերտած դիմապատկերում: Իսկ «պոետի» հուշակված խաչատուր Մխաթյանի («մի սագ ապուշ») դեմ Ոսկանյանի երգիծական բանաստեղծության որոշակի արձագանքը, թվում է, առկա է Հ. Պարոնյանի ազգային շոքերի համապատասխան հատվածում, որտեղ կրկնվում է հանրահայտ արտահայտությունը. «Մի վախճաք, ո՛վ բարեկամներ պոետիս, չպիտի մորթեմ զինքն, ոչ ալ մի սագի փետուրով պիտի հարվածեմ զինքն, այլ...» և «...իրեւ մի սագ պոետի փետուրներով զարգարվելն վերջը...» և այլն: Ըստ երևույթին Հ. Պարոնյանն իզուր չէր Ոսկանյանին հիշատակում (այն էլ առաջինը) գրականությունը ծաղկեցնող սերնդի շարքում և պատվիրում նրա ներկայությունը շմոռանալ:

գնալու մերօրյա և՛ հարցադրումները և՛ փորձերը¹¹, որոնք կարելի է հաստատապես ասել՝ ապարդյուն չեն լինի:

Այս հոգվածի շրջանակը հնարավորություն չի տալիս խոսելու մեզ հայտնի կենսագրական շատ փաստերի մասին: Բայց անդրադառնա՞նք, մեր կարծիքով, շափազանց կարևոր մի խնդրի, որը ցույց է տալիս, թե գործունեության ինչպիսի լայն ծրագրով էր Ստ. Ոսկանյանը 1865 թ. վերադարձել Ջմյուռնիա:

«Արշալույս Արարատյանի» հավաքածուն թերթելիս մենք ուշադրություն դարձրինք այն բանի վրա, որ ազգը լուսավորելու նպատակով Ջմյուռնիայում 1866 թ. հիմնադրված «Ուսումնասեր ընկերության» ինչը հիմնադիրներից մեկը եղել է Ստ. Ոսկանյանը: Հայտնի է, թե նա ինչպիսի կրթոսոթյամբ է խոսել առաջներում Պոլսում հիմնված «Համազգյաց» բարեգործական ընկերության և Ջմյուռնիայում ստեղծված «Սյունյաց ընկերության» մասին: Վերջինը հիմնվել էր գավառներում հայկական դպրոցներ բացելու նպատակով և բավական բեղմնավոր գործունեություն էր ծավալել, բայց քայքայվել էր կղերի ձեռքով ու կրոնական վեճերի հետևանքով:

Դառնալով նորաստեղծ «Ուսումնասեր ընկերության» հիմնադիր-նախաձեռնողներից մեկը, ապա և նրա ատենապետը՝ Ստեփան Ոսկանյանն, անկասկած, նպատակ ունեն կենդանություն տալ մասնավորապես «Սյունյաց ընկերության» թերի մնացած ծրագրին: Ընկերության ընդարձակ հայտարարությունը զետեղված է «Արշալույս Արարատյանի» 1866 թ. № 772-ում, իսկ № 773-ում՝ կանոնադրությունը, որն ըստ լեռնի՝ գրել է Ոսկանյանը՝ իր անունը թաքցնելով: Թերթի այդ համարներում տպագրված է նաև Ստեփան Ոսկանյանի ծավալուն ճառը, որտեղ նա ընդգծում է, թե «ապագային վրա մեծ վստահություն ունինք»:

«Արշալույս Արարատյանի» հետագա համարները բավականաչափ տեղեկություններ են տալիս Ոսկանյանի Ջմյուռնիայում սկսած ակտիվ գործունեության մասին: Այդ և այնօրյա թերթերի հավաքածուների (ներառյալ նաև պակասող համարների) ուշադիր ուսումնասիրությունը, շատ նոր փաստեր կտան:

Ստ. Ոսկանյանի, իբրև Մեսրոպյան հայտնի վարժարանի տնօրենի, գործունեության մի անհայտ էջ է պարզում նրան երկրպագող աշակերտներից Գևորգ Պուպլին: 1901 թ. նա «Մասիսում» հրապարակել է մի հոդված, որտեղ հիմնականում անդրադառնում է Ոսկանյանի ուսումնա-դաստիարակչական գործունեությանը¹²: Պուպլին նախ նշում է, որ Ստ. Ոսկանյանը Ջմյուռնիա է վերադարձել ոչ իր նախաձեռնությամբ, այլ «համակերպվելով ... ուսումնասիր ընկերության փափագին» և նպատակ ունենալով «հայ մանկտոյն դաստիարակության նվիրական գործն ի կատար հանելու»: Որ, իրոք Ոսկանյանն իր կամքով չի վերադարձել Ջմյուռնիա, վկայում է նաև Ռ. Որբերյանը. «Իսկ իր ցիգ-զինքը կհրավիրեն դպրոցներու տեսչության գործին: Կյանքին առաջին սխա-

¹¹ Բանասեր Ս. Շտիկյանը «Լրագրի» (հաս. գիտ.) 1969 թ. № 4-ում և «Պատմա-բանասիրական հանդեսի» 1969 թ. № 2-ում հրապարակել է Ստ. Ոսկանյանի դրական ծառայության հետքերով կատարած իր որոնումների արդյունքները: Մենք այդ հոդվածներից անկախ սույն հրապարակումով նպատակ ունենք դիտական շրջանառության մեջ դնել մեզ հայտնի մի շարք նյութեր:

¹² «Մասիս», 1901, № 26, էջ 406—409:

լը... տյո՛հ հրավերը ընդունելը կըլլա՝¹³— գրում է նա, նկատի ունենալով հետագա դեպքերը:

Ստ. Ոսկանյանն անմիջապես ձեռնամուխ է եղել վարժարանի վերակառուցմանը: Մինչ այդ Զմյուռնիայի դպրոցները գերազանցապես վարդապետացու, քահանայացու էին պատրաստում, նկատում է Պուլլին, «մինչդեռ Իզմիրի պես վաճառաշահ քաղաքի մը մեջ ավելի վաճառական, վաճառատան գրագիր և արհեստավոր պատրաստելու է, կըսեր: Եվ ճիշտ այդ նպատակին ծառայող հատուկ բռնկում մը շինեց» Ոսկանյանը:

Ըստ Ոսկանյանի, մարդու դաստիարակության գործը բաղկացած է երեք առաջնակարգ մասերից՝ ֆիզիկական կամ մարմնավոր, բարոյական և իմացական կամ մտավոր դաստիարակություն: Գործնականում հնարավորություն «տանալով կիրառել դեռևս 1859 թ. «Արևմուտքի» առաջին համարում իր արժարժած կրթական ու դաստիարակչական առաջադեմ խնդիրները, Ոսկանյանը նպատակ ուներ ամբողջապես նվիրվել այդ շնորհակալ գործին: Նա գտնում էր, որ հայ ուսուցիչն ավելի մեծ դեր ունի կատարելու, քան եվրոպայինը, որովհետև նա պետք է լրացնի «անդաստիարակ ծնողաց թերությունները»: Նույն Պուլլիի վկայությամբ՝ Ստ. Ոսկանյանի մտավոր դաստիարակության ծրագիրն ընդգրկում էր ա) հայոց լեզու («ավելի աշխարհաբար, որպեսզի ապագա վաճառականը գրաբար սովորելու համար տարիներ չկորսընցնե», բ) ընդհանուր պատմություն, կրոնագիտություն, գ) թվաբանություն՝ տեսական և գործնական, դ) գրահաշիվ և երկրաչափություն, ե) տոմարակալություն, զ) գծագրություն, է) աշխարհագրություն՝ քաղաքական և առևտրական, ը) տարերք բնական գիտություն, թ) օսմաներեն, ֆրանսերեն, անգլերեն և հունարեն, ժ) տարերք առևտրական իրավունքի, ինչպես նաև առևտրական քիմիագիտություն՝ գործնականով:

Դա Մեսրոպյան վարժարանի համար էր, որտեղ միայն տղաներն էին սովորում: Իր տնօրինության տակ գտնվող Զմյուռնիայի մյուս վարժարանի՝ Հռիփսիմյանի սանուհիների համար նա մշակում է մի այլ ծրագիր, որտեղ «կարը, ասեղնագործությունը և առտնին տնտեսությունը մասնավոր տեղ բռնած էին»:

Չափազանց մեծ պահանջկոտություն էր դրսևորում մանկավարժ Ոսկանյանը նաև վարժարանի ուսուցիչների նկատմամբ: Նա գտնում էր, որ «լավագույն է... մանկատն ուսուցիչն զուրկ ձգել, քան թե ապիկար և տգետ ուսուցիչներու հանձնել»:

Ինչպես հայտնի է, Ստ. Ոսկանյանին վիճակված չէր իրագործել իր ծրագիրը: Նա Մեսրոպյանում տնօրինել է միայն երկու տարի՝ 1866—1867-ին (մի այլ վկայությամբ՝ 18 ամիս): Այդ տարիները «մանկավարժի համար արդյունավոր եղան ամեն կերպով»¹⁴: Այս վկայության մեջ բնավ չափազանցություն չկա: Նույնն է հաստատում նաև, նրա առաջին հանգամանալից ուսումնասիրողներից մեկը՝ Հր. Ասատուրը՝ «Մարմարա» թերթում տպագրված իր հոդվածում: Ոսկանյանն «այդ շրջանին մեջ վարժարանին կուտա իր սկզբունքներուն հարմար ուղղություն մը, մշակել տալով աշխարհաբարը, օտար լեզուները և գործնական կյանքի մեջ անհրաժեշտ եղող ուսումները»¹⁵: Բայց, շարունա-

¹³ Նույնը, № 15, էջ 225:

¹⁴ Նույնը, № 26, էջ 408: Տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1901, № 1346:

¹⁵ «Մարմարա», 1947, 12-ին դեկտեմբերի:

կում է Պուպլին, «Ստեփան Ոսկանի հաստատած դպրոցական մեթոդը չկրցավ տոկալ կարգ մը իզմիրցի աղագայիններու ստորին մեքենայությանց և բուն ու անիմաստ պահանջումներուն առջև, որոնք պատիվ չէին բերեր իրենց հեղինակներուն»։ Ոսկանյանն «անիրավ հարձակումներ և զրպարտություններ անշահի զգված էր, որ ալ ուսուցչական գործերով երբեք չուզեց զբաղիլ»։

Ռ. Որբերյանն, իր հերթին, այսպես է բացատրում Ոսկանյանի հեռանալը մանկավարժական ասպարեզից. «...Չի հարմարելով իր ժամանակին, կըաշվի գործն։ Ինքը՝ վեճի մարդ՝ տեսչական խաղաղիկ ու անգորր սեղանին չպիտի հարմարեր բնավ։ Մտնական մթնոլորտը իրը չէր կրնար ըլլալ։ Դպրոցական միջավայրը նեղ էր իրեն»¹⁶։

Ի դեպ, այդ պետք է պարզ լիներ նաև Ստ. Ոսկանյանին ոչ միայն իր պարբերականների և իր շուրջը ստեղծված թշնամական մթնոլորտից, այլ նաև վարժարանների տնօրեն կարգվելու և «Ուսումնասեր ընկերության» ատենապետ ընտրվելու առաջին օրերին, երբ «Սիոնը» իր 786-րդ համարում հարձակումներ գործեց Մեսրոպյան վարժարանի ու նորաստեղծ ընկերության դեմ, երբ համբավվոր այդ ուսումնական օջախը համարվեց «Վոլթեռյան, Ժյուլ Սիմոնյան և Ռենենյան»։ Ավելին, այդ տրամադրություններին իսպառ անարդարացի թանձրացումներով տուրք տվեց նաև Վրույրը (Մ. Մամուրյանն) իր «Հայկական նամականի» 1866 թ. օգոստոսի 10-ի նամակում Լուտանյանին (Ստ. Ոսկանյանին) համարելով «հովով լեցուն փամփուշտ մը», ոսկեպաշտ, աղգի դեմ մատնություն գործող վասակ, որն իր գրիչն... տղմի մեջ կթաթխեն»¹⁷։

Հայ մանկավարժության պատմությամբ զբաղվողների համար այս, անշուշտ, հետաքրքրական տեղեկությունները կարոտ են նոր լրացման ու մեկնաբանության։ Մեզ հետաքրքրողը, տվյալ դեպքում Ոսկանյան գրական առնչակցություններն են։

Գրական-բանասիրական մի ուսումնասիրության առթիվ սրանից մի քանի տարի առաջ հարկ եղավ որոշ որոնումներ կատարել Ստեփան Ոսկանյանի հետքերով և ուրախությամբ պիտի նշենք, որ դրանք սպասածից արդյունավետ եղան։ Դրանց շնորհիվ հաջողվեց հրապարակ հանել Ստեփան Ոսկանյանի՝ ինչպես առաջներում հրատարակված, այնպես էլ նրա մահվանից հետո լույս տեսած մի շարք գործեր, որոնք մինչև այժմ փաստորեն անհայտ են մնացել այն պարբերականների հավաքածուների պակասավոր լինելու պատճառով, որոնցում դրանք զետեղվել են։ Խոսքը միայն Ստեփան Ոսկանյանի հիշատակված այն երկու պամֆլետների մասին չէ, որոնք ուղղված են Գ. Կոստանդյանի ու նրա «Մեթոդի վրա» գրքի, ապա և նրան իր հովանավորության տակ առած ֆրանսիական ակադեմիայի ակադեմիկոս, պոզիտիվիզմի խոշոր ներկայացուցիչ, լեզվաբան էմիլ Լիթրեի դեմ։ Մեզ նաև հաջողվեց Վիեննայից և Փարիզից ստանալ Ստեփան Ոսկանյանի մի քանի բանաստեղծությունները, նրա իսկ ձեռքով գրած իր չափածո տապանագիրը, ինչպես նաև Փարիզից Մատթեոս կաթողիկոսին հղած նամակը։

Ստեփան Ոսկանյանի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրողները (Լեո, Հր. Ասատուր, Ա. Կարինյան, Հր. Ղազարյան և այլն) նշել են, որ նա դրել է նաև չափածո, հանդես է եկել «բանաստեղծի դերում»։ Իհարկե, Ոսկանյան-

¹⁶ «Մասիս», 1901, № 15, էջ 225։

¹⁷ Մ. Մամուրյան, Նրկեր, Երևան, 1966, էջ 612—613։

յան-բանաստեղծը հակառակ Մ. Նալբանդյանի, եթե ուղիղ իմաստով հասկանանք, չափազանցված կարծիքի, թե «պ. Ս. Ոսկան ունի բանաստեղծական ճոխ քանքար», անհամեմատ թույլ է, քան հրապարակախոս, նույնիսկ արձակ ստեղծագործող Ոսկանյանը: Բայց, անկախ դրանից, Ստեփան Ոսկանյանի չափածո գործերից մի քանիսը ժամանակին և՛ լայն տարածում ունեին, և՛ նշանակալից են թե՛ հեղինակի վաղ շրջանի գրական դիմաստվերը տալու համար. և թե՛ առհասարակ: Այդ գործերը մասնավորապես պետք է ուշադրության արժանանալին «Հայ նոր դրականության պատմության» 2-րդ հատորում, որտեղ Ստեփան Ոսկանյանին առանձին տեղ է հատկացված և ուր լոկ շեշտվում է, որ «նա դրել է բանաստեղծություններ», առանց մի տող իսկ մեջ բերելու: Այնինչ դեռ սրանից մոտ 70 տարի առաջ Լեոն ուշադրություն է հրավիրել Ոսկանյանի հայրենասիրական այն բանաստեղծության վրա, որը տեղ է գտել շատ երգաբաններում¹⁸: Դա, իրոք, գողտրիկ մի ձոն է՝ հայրենիքին նվիրված:

Ես ձեր սիրով, հայրենիք,
Բարեկամներ, բնտանիք,
Հափշտակեալ կը մոռնամ
Ալիք, անդունդ, մահ անգամ:

.
Հայրենիքի դաշտ և սար,
Երկինք կապույտ, արև վա՛ռ
Հոն կը տեսնեմ. և անդեն
Կը համոզուիմ քե անդ են
Եվ կյանք և սեր հշմարիտ
Ի երանութեան մարգարիտ:
Հեռի անկե մարդ ունայն
Կը թափառի երկիր լայն

Բարօրութիւն խնդրելով,
Բայց կը գտնե վիշտի բով:
Օ՛ հայրենիք, ի քո հուշ
Հով մը կ'զգամ շատ անուշ,
Եվ մանկութիւն իմ անա
Մաղիկներով կ'երևա:
Կառոյգանամ և ոգի
Կ'առնում շունչեդ կաթոգի:
Փութա՛ շոգի, հով շարժե՛
Ժամ մը անուշ գանձ կ'արժե
Հասնիլ, ըսել. «Քեզ բարև
Հող ու տրիք ինձ արև»:

Քաղվածաբար բերված այս բանաստեղծությամբ է ավարտվում Ստ. Ոսկանյանի «Հայ դուցազնուհի մը» պատվածքը, որը նա հրատարակել է «Արևմուտքի» 1859 թ. երրորդ և չորրորդ համարներում:

Հետագայում այդ պատվածքը՝ բանաստեղծությամբ հանդերձ, երկու անգամ վերահրատարակվել է նաև առանձին գրքուկով¹⁹: «Հայ նոր գրականության պատմության» մեջ, ճիշտ է, պատվածքն արժեքավորվել է, մեկնաբան-

¹⁸ «Մուրճ», 1901, № 12, էջ 162:

¹⁹ Ոսկանյանի հիշյալ պատվածքը վերահրատարակել է Մ. Փորթուզալյանը նախ 1885 թ., Մարտիում, ապա և 1912 թ.: Առաջին հրատարակության ժամանակ Փորթուզալյանը նշել է. «Արտատպված «Արևմուտք» լրագրեն», իսկ երկրորդ անգամ տպագրելիս պատվածքին կցել է «Երկու տող Բ. տպագրության առթիվ» բացատրությունը, որտեղ ասում է, որ առաջին հրատարակության ժամանակ հակառակ հանվան չէինք հիշած հեղինակը: Այնուհետև նշելով, որ երկը «պարսիկների տիրապետության ժամանակ Երևանի մեջ տեղի ունեցած իրական դեպքի մը վրա հիմնված է», նա շեշտում է Ոսկանյանի ասպարեզից հեռանալու փաստը, ընդգծում նրա հեղափոխական անցյալը. Փորթուզալյանը վկայում է, որ Ոսկանյանը համիդյան ռեժիմից «զգուշանալով չէր ուզած իր անունի հիշվելը»: Նա բերում է Ստ. Ոսկանյանի 1885 հուլիսի 4-ին Զմյուռնիայից հղած նամակը, որտեղ «մեծ ազատասերը» գրում է՝ «կրնաք Արևմուտքի հողվածները հավնածնիդ հրատարակել, բայց կաղաչեմ անունս չի հիշեք ձեր թերթին մեջ» (տե՛ս. «Հայ դուցազնուհի մը», Մարտի, 1912):

վել, բայց նրան կցված հիշյալ բանաստեղծության մասին ոչ մի խոսք չի ասվել: Նույնն է տեղի ունեցել նաև Ստ. Ոսկանյանի «Գաբրիել» հայտնի երգիծական չափածո ստեղծագործության հետ՝ ուղղված Գաբրիել Այվազովսկու դեմ: Գոյություն ունի ավանդական այն կարծիքը, թե Ոսկանյանը, Մեսրոպյան վարժարանի տեսչությունից հետո, հեռանալով հայկական ասպարեզից և ֆրանսերեն թերթի խմբագրելով, այլևս հայերեն ոչինչ չի գրել ու չի հրատարակել: Այդ մասին կան նաև իր՝ Ոսկանյանի խոսքերը: Ինչպես վկայում է Ռ. Որբերյանը, Ստ. Ոսկանյանը 1898 թ., իր հետ ունեցած զրույցի ժամանակ, ասել է. «Երեսուն հինգ տարի է բնավ հայերեն բառ մը գրած չեմ... կարգ մը ոտանավոր տապանագիրներն զատ»²⁰:

Որևէ հիմք չունենք կասկածի տակ առնելու այս խոսքերի ճշմարտացիությունը: Սակայն Ոսկանյանի մահվանից հետո «Սուրհանդակ» թերթը «Ազգային քրոնիկ» խորագրի տակ տպագրել է հետևյալ ծանուցումը.

«Ստեփան Ոսկանի 100-ի չափ հայերեն ոտանավորները և մեկ կիսակատար վեպը երևան եկած է: Հանգուցյալը թեպետ կսեր թե հաս հայերեն չգրելու երդում ըրած եմ, բայց կերևա որ գաղտնապես կգրեր ու կպահեր իր ոտանավորները»²¹:

Հարյուրի չափ հայերեն ոտանավորներ և անավարտ վեպ: Ի՞նչ ճակատագրի են արժանացել դրանք, ի՞նչի մասին էին: Դժվար է ասել: Ոչ ոք չի զբաղվել այս հարցով, ուշագրություն չի դարձրել նշանակալից այս վկայությանը, որն, իրոք, ինչպես պարզվում է, անհիմն չէ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, իսկապես, Ոսկանյանը, թեև «զգված ամենեն», շարունակում էր ստեղծագործել, գրել հայերեն ևս, և հիմք կա կարծելու, որ նա իր ստեղծագործության առանձին նմուշներ հրատարակում էր հայ մամուլի էջերում: Ավելին, վկայություն կա, ինչպես դա կտեսնենք ևսուրե, որ Ոսկանյանի բանաստեղծությունների ինքնագիր տետրը ձեռքից ձեռք էր անցնում: Իհարկե, դժվար է ասել, թե դա տեղի ուներ իր սեփական ցանկությամբ: Գո՞ւցե մտերիմներն էին հորդորում, գո՞ւցե որոշ այցելուներն էին նրա գործերը ձեռք զցում և տարածում, հրատարակում: Փաստ է, սակայն, որ «ասպարեզը լքած» և դրա համար բազմիցս հրապարակավ կշտամբանքի արժանացած Ստեփան Ոսկանյանը ստեղծագործում էր, և նրա կենդանության ընթացքում նրա առանձին գործեր երևան են եկել մամուլում:

Զմյուռնիայում լույս տեսնող «Մետեորա» պարբերականը դեռևս 1880 թ. իր Ա հատորում գետնից էլ է այսպիսի ծանուցում՝ «Հետևյալ ոտանավորը, զոր արժանահարգ բարեկամ մը ղրկած է մեզ հրատարակելու, հեղինակին անունը չունի, թեև ոմանք կկարծեն թե պ. Ս. Ոսկանյանինն է. մենք լոկ գործին արժանիքը նկատողության առնելով՝ կհրատարակենք դայն», և տպագրել տասը քառյակից բաղկացած մի բանաստեղծություն՝ «Հին զինի» վերնագրով:

Պարբերականը, ինչպես տեսնում ենք, թեականորեն է արտահայտվում այն մասին, թե բանաստեղծությունը Ստ. Ոսկանյանինն է: Բայց պետք է ենթադրել, որ դա սոսկ ձև էր հայտնի դարձնելու բանաստեղծության հեղինակի ով լինելը: Այսուհանդերձ, «Մետեորայի» հաջորդ համարներում մենք չենք

²⁰ «Արևելք», 1898, № 3885:

²¹ «Սուրհանդակ», 1901, № 635, տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1901, № 1341, «Արևելյան մամուլ», 1901, № 16, «Մարմարա», 1947 թ., 12-ին դեկտեմբերի, Վ. Գ ա ղ ա ղ ա ն, Հիշատակարան և այլն:

հանդիպում որևէ այնպիսի հիշատակության, որ պարբերականի ենթագրությանը չի ճշտվել կամ Զմյուռնիայում գտնվող ու գործող Ստ. Ոսկանյանը բողոքել է իր անունը մատնանշելու դեմ: Ըստ որում «Մետեորայի» օրինակով հայ մամուլի այլ օրգաններ ևս, օրինակ «Մասիսը», այդ բանաստեղծության հեղինակ են համարել Ստ. Ոսկանյանին:

Բանաստեղծության սահուն լեզուն, հայտնի շարժով նաև բովանդակությանը, վկայում են, որ նա աշխարհաբարի հստակ ոճին տիրապետող և բոլորի կողմից լքված («ամենքը ինծի ապերախտ գտնվեցան»), սիրո ծանր հարվածը կրած, սև օրեր քաշող ու անցյալի հուշերին անձնատուր եղած Ստեփան Ոսկանյանի գրչին է պատկանում²²:

Ահա այդ բանաստեղծությունը.

Երբ սեր և կամ դժուրքին
Բարեկամի կամ կիցի
Մաքուր վերքեր քեզ կու տայ՝
Դուն փնտռե միշտ հին գինի:

Շիշ գինով՝ և մարդըս
Իր արյունով են հայտնի.
Եթե արիւն զուտ կուգես
Խմե դուն միշտ հին գինի:

Երբ թշնամին է նեղգոտ
Եվ սուտ ձեռք կը հագնի՝
Մոռանալու դեղը հիշե
Ընտրելով միշտ հին գինի:

Որքին արիւն մեզ կու տա
Եվ առնուրին և ոգի
Անհնար է վատ բլլալ
Երբ կը տնկենք հին գինի:

Երբ սև օրեր կը ծագին
Եվ ամեն հույս կը մեռնի՝
Նայեալ ծառին փաթթուե
Հոյս կու տայ միշտ հին գինի:

Տնկենք ուրեմն և երգենք
Որչափ և ենք կենդանի
Մարդուս սիրտն է չոր ցամաք
Թե չոռոգեր հին գինի:

Երբ անցյալին հիշատակ
Աչքիդ առջև կը կանգնի՝
Շիշին մեջը միշտ նայե՝
Թող որ հոսի հին գինի:

Հեռու մեզմե այն մարդիկ
Որոնք հոգով ներքինի
Եվ մարմնով ծրդուած
Կը նախատեն հին գինի:

Շիշի նման է մեր կեանք,
Եթե արժեք շատ ունի
Հավատ՝ որ միշտ իր ներսը
Կը գտնուի հին գինի:

Մենք Բագուսի շենք ծառայ՝
Հապա ազնիվ Հիծիենի
Զուարթություն կը խնդրենք
Երբ կը տնկենք հին գինի²³:

Կան ուրիշ դեպքեր ևս, երբ Ստեփան Ոսկանյանի կենդանության ժամանակ հայ պարբերականներում երևան են եկել նրա բանաստեղծությունները՝ անստորագիր կամ ծածկանունով՝ աստղանիշով²⁴, բայց հետո հայտնի է դար-

²² Տե՛ս Ռ. Որբերյանի, Հր. Ասատուրի և Ֆրանսերեն մի թերթի վկայությունները՝ «Մասիս», 1894 թ. 23-ին մարտի և «Մարմարա», 1947 թ. 12-ին դեկտեմբերի համարներում:

²³ «Մետեորա», 1880, հ. Ա, էջ 214—215:

²⁴ Մենք հակված ենք ենթադրելու, որ Ստեփան Ոսկանյանն անստորագիր և ծածկանունով աշխատելու էր հայ որոշ պարբերականների, մասնավորապես «Մետեորային» (1880—1881), «Մետեորայում» հանդիպող ծածկանունների առթիվ հարցումով մենք մի քանի տարի առաջ

ձեռք, որ դրանց հեղինակը նույն ինքը «Արևելքի» և «Արևմուտքի» խմբագիր Ստ. Ոսկանյանն է:

Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիս» պարբերականում, երբ նրա խմբագիր-տնօրենը Ոսկանյանի անողոք պատասխան-հողվածներին արժանացած Կ. Ս. Ութուջյանն էր, 1877 թ. լույս է տեսել «Ապրիլ-մեռնիմ» բանաստեղծությունը: Նրա տակ ստորագրության փոխարեն իրար կողքի դրված է երկու աստղանիշ (այս ձևը Ոսկանյանը կիրառում էր նաև իր խմբագրած պարբերականներում):

«Մասիս» այդ համարը լույս տեսնելուց մի քանի օր հետո «Արշալույս Արարատյանը» ղեկավարել է «Հ. Բաբելյան» ստորագրությունը կրող հետևյալ նամակը. «Մասիս [1877 թ., հունիս] լրագրոյն ամսոյս 9 թվոյն մեջ հրապարակյալ երկաստղ ստորագրությամբ «Ապրիլ» թե մեռնիմ» վերնագրով բանաստեղծական գրվածք՝ զմիռնացի մեծա. Ոսկանյան Ստեփանին կրկնաբար և ժամանակավ Փարիզ հրատարակած Արևմուտք անունով իր հանդեսին մեջ ալ անցած է, ինչպես հայտնի է բազմաց: Այլ քանի մը բարեկամներ՝ նույնիսկ անոր մեկ ձեռագիր տետրակը ցույց տվին մեզ, որու մեջ իր զանազան երկասիրությանց հետ սույն ոտանավոր դրվածն ալ կը գտնվի: Ուստի ավելորդ է ըսել թե այն սխալը պարզապես Մասիս լրագրոյն մեծա. խմբագրին անուշադրութենեն կամ մոռացումեն առաջ եկած է:

Կը խնդրեմ, տեր խմբագիր, շնորհ ըրեք սույն երկտողս հրատարակել ի սեր ճշմարտության:

Հակառակ դրան, մինչև օրս էլ հայ մամուլի և նոր գրականության պատմությունն ուսումնասիրողների, ինչպես նաև Ստեփան Ոսկանյանի գործունեությունը լուսաբանողների ուշադրությանը չի արժանացել այդ չափազանց խորիմաստ, պաթարելու ու տոկալու կոչ անող բանաստեղծությունը, որ, մեր կարծիքով, պատիվ կբերեր անցած դարակեսի շատ հեղինակներին:

Բերենք այդ բանաստեղծությունը.

Ապրիլ՝ թե մեռնիմ, տղա մը կ'երգեր,
 Եվ դաշտի վրա ակոս կը հերկեր:
 Դեմքով էր տրտում, մեռնիմ կ'ըսեր ա՛հ,
 Մեռնիմ և երթամ, եկուր զիս ա՛հ մա՛հ:
 Հայրիկըս մեռավ և ալ չուցիմ մայր,
 Անկողին ինկած կը հյուծի եղբայր,
 Եվ ես գերի եմ ու սրտով անհույս,
 Թեպետ հասակով ըլլամ նորաբույս:
 Ապրե՛մ, եվ ինչո՞ւ, այս երկրի վերա
 Ազատ ծնվելով, ապրեմ ես ծառա:
 Ծառայի մը համար չկա բնավ կյանք,

Անլուր վշտերու է այն մթին հաճ:
 Մեռնի՛մ, օ տերև, դուռն Կոնստանտնուպոլիս,
 Կասկած վերքի չափ սրտեր կը հոշեն...
 Եվ թշվառ ուրբը մատերով զգույշ
 Կը փետտեր մեղմիկ ծաղիկը ֆեմու:
 Ապրի՛մ թե մեռնիմ, վերջին քերթն
 սուրբ՝
 Կըսեր հե՛մ ուրբին, ապրե՛, ու շաբե՛
 Ձի անհուսությամբ մեր սուղի փայլե,
 Այս երկրի վերա, վատին կը վայլե:
 Գերության շղթա չփրփիր լալով.

գիմել ենք Զմյուռնիայում հրատարակված «Հայ գրականություն» ամսագրի խմբագիր Զարեհ Գաղաղյանին, որը մեզ պատասխանել է, թե «Ստեփան Ոսկանն է Օրսկի ծածկանունով գրագետը... Ս. Ոսկան իր մականունը թարգմանած է ֆրանսերեն, այսինքն՝ մահուր կամ զնդեցիկ ոսկի, որիմն Ոսկան = ՕՅ—Յել—ի» (Զ. Գաղաղյանի նամակը 1963 թ. հոկտեմբերի 1-ին): Անշուշտ, դժվար է միայն այդ վկայության վրա հենվելով վերջնական եզրակացության գալ, թեև «Օրսկի» թարգմանած նյութերի բովանդակությունը, նրան պատկանող մի այլ բանաստեղծության ոճն ու լեզուն հարազատ են Ստ. Ոսկանյանին:

Մերի առնություն պետք է և կորով: Ինքնամեռ երբեք թշնամի անհաշտ
Ապրե՛, կովե՛լու օր պիտի ծագի, Աշխարհես չելնե՛ր. կ'սպասե կանգուն
Սր ազատության, օր հաղթանակի: Ձինվորի նման արի և անքնուն²⁵:
Ապրե՛, այս աշխարհ կովի է մեծ դաշտ.

Վերադառնանք «Սուրհանդակի» ազդին: Թերթը կատարեց տված խոս-
տումը և հաջորդ համարում իսկ զետեղեց Ստ. Ոսկանյանի իր համար գրած
չափածո տապանագիրը, որ, ըստ երևույթին, գերեզմանաքարի վրա փորա-
գրելու համար չէր նախատեսվում և ոչ էլ արժանացել է դրան: Չափածոն յոթ-
վանկանի շորս քառյակ է՝ առանց կոնկրետ բովանդակության և չափազանց
մշուշապատ²⁶:

Իսկ այն հարյուրի չափ հայերեն ոտանավորները և «կիսակատար» վե՛պը:
Դժբախտաբար, որքան մեղ հաջողվեց պարզել, թերթն այլևս չի անդրադարձել
դրանց, չի հրատարակել Ստ. Ոսկանյանի որևէ անտիպ երկը²⁷:

Դրա փոխարեն Ձմյուռնիայի «Աշխատանք» թերթը լույս է ընծայել Ստե-
փան Ոսկանյանի անտիպ գործերի նմուշները: Խմբագրի խնդրանքով՝ դրանք
հրատարակվելու համար տրամադրել է Ստեփան Ոսկանյանի եղբայրը՝ Ար-
տաշես Ոսկանյանը: Այդ մասին հատուկ ծանուցում զետեղելուց հետո, խմբա-
գիրը, «Ստեփան Ոսկանի անտիպ գործերեն» ընդհանուր խորագրի տակ նախ և
առաջ տեղավորել է նրա նամակը Մատթեոս կաթողիկոսին: Ինչպես երևում է
խմբագրության ծանոթագրության շարունակությունից, դա պատասխան է կա-
թողիկոսի այն ուղերձի, որ նա հղել է Փարիզում գտնվող Ստեփան Ոսկանյանին
և որը նա առաքել է այնտեղ ուղևորվող Միքայել Նալբանդյանի միջոցով:

Ուսումնասիրողներին հայտնի է, որ Միքայել Նալբանդյանը 1859 թ. ապ-
րիլին Փարիզում հանդիպել է Ստեփան Ոսկանյանին²⁸: Սակայն միայն այս
աղբյուրից է պարզվում, որ Միքայել Նալբանդյանը Մատթեոս կաթողիկոսից
նամակ է տարել և Փարիզում հանձնել Ստեփան Ոսկանյանին: Մեզ հայտնի չէ
կաթողիկոսի այդ ուղերձի բովանդակությունը (հնարավոր է, որ նամակի
պատճեն պահպանվել է կաթողիկոսական դիվանում): Բայց կարելի է ենթա-
դրել, որ ազատամիտ ու կղերի դեմ մարտնչող հրապարակախոսին և ամենայն
հայոց կաթողիկոսին իրար կապող խնդիրը նրանց ընդհանուր հակառակորդ,
Ոսկանյանի արտահայտությամբ «երկդիմի վարք և ծակումուտ բարք» ունե-
ցող Գ. վ. Ավագովսկին էր, որը ֆրանսերեն մի նամակում, ի դեպ, անդրա-
դարձել է նաև հայ երկու ականավոր հրապարակախոսների փարիզյան հան-
դիսմանը:

Քանի որ այդ նամակը կարող է հետաքրքրական լինել մեր պատմաբան-
ների ու բանասերների համար, բերում ենք նրա լրիվ տեքստը՝ հարազատ մնա-
լով բնագրից ընդօրինակվածին.

²⁵ «Մասիս», 1877, հունիսի 9-ին: Նկատենք, որ Ոսկանյանի «Արևմուտքի» 1859 թ. № 1-ի
առաջաբանում հայ մամուլը համեմատվում է «ազդիւմ-մեռնիւմ» ծաղկի հետ:

²⁶ Տե՛ս «Սուրհանդակ», 1901, № 636: Ոսկանյանի մահարձանի բացման մասին «Արևելյան
մամուլի» (1902, № 399) հաղորդագրության մեջ տապանագրի մասին ոչինչ չի ասվում:

²⁷ «Սուրհանդակի» մեր գրապահոցներում եղած հավաքածուները խիստ թերի են:

²⁸ Տե՛ս Ա. Մ. Ին ճ ի կ յ ա ն, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրու-
թյունը, Երևան, 1954, էջ 114—115 և Ա շ ո տ Ղ ո վ հ ա ն ի ս յ ա ն, Նալբանդյանը և նրա ժա-
վանակը, Երևան, 1955, հ. 1, էջ 319:

«Առաքելապատիւ Սրբոյ Հայր».

Խորին անհաժողովեամբ ընկալալ զօրհնութիւն և զկոնդակ առաքելապատիւ Սրբութեան Զերոյ և սիրտ իմ յաւարեկ լուեալ, զոր պատմէրն պ. Նալպանդեանց. վերստին համակերաւ նոյն սիրով ծաղիկ հասակի, զոր Սրբութիւն Զեր յիշէ և զոր վտարանդութիւն և թշնամութիւն թունաւորեցին անխնայ: Բայց թոյն անկարող է խաւարել զարեւ որ զայ մեզ ի վերուստ Տոյս իմ էր յարգարութիւն և յԱստուած որ է յաւիտենական արդարութիւն: Նուիրական այս յուսով կացի մնացի անդրդոնելի յօտար երկիր և յօտար ժողովուրդս. անգամ ազգին. զոր սիրեցի արեամբ չափ և յօտին. զոր առաքելապատիւ Սրբութիւն Զեր առաջնորդէ ի շաւիղս երանելի հարց: Շաւիղ այս ոռոգեցաւ անապակ արեամբ նահատակաց մերոց. «Արին քրիստոնէից. սերմ քրիստոնէութեան», — ասաց Քէրկիւիանոս: Տգիտութիւն և յուլութիւն և այլասեռ բարք մղեցին զմեր կրօնաւորս հեռի յայսմ շաւղէ: Եղուկ... մոռացան նոքա զԱստուած, մոռացան զսուրբ աւանդութիւնս, որք տան զկենդանութիւն ազգին որպէս մայր ծնանի զզաւակ...

Աղերս իմ և մաղթանք ւրտագին են՝ զի ընդ հովանեաւ հոգևոր իշխանութեան սուրբ հայրապետի ծագեցսին աւուրք բարոյականութեան ի պաշտօնեայս եկեղեցւոյ և ծաւալեցսին անտի ընդ ամենայն երկիր, ուր հայ որեւոր հեծէ անոք և անօգնական: «Հողմն հարաւային». տօթակէզ խորշեր երբեմն զնոսա, մահաբեր շշուռն հիւսիսայն սպառնայ այժմ ընկղմել յանդունդս իւր սառնամանեաց: «Դո՛ւ, Տէ՛ր յարուցեալ ղթացիս ի վերայ Սիօնի. ժամանակ զթալոյ նորա հասեալ է ժամս:

Ներեցէ ինձ առաքելապատիւ Սրբութիւն Զեր այս մաղթանք կնքել զիմ նամակ և ըղձալ ի բոլոր սրտէ զի աթոռ առաքելական որ բազմի այսօր Սրբութիւն Զեր, մնացի միշտ վասն Թորգոմեան սերունդի խարխիս հոգևոր ազատութեան և անկախութեան. առանց որոց չիք քրիստոնէութիւն, և մարդկութիւն կործանի ի նիւթապաշտութիւն:

Առաքելապատիւ Սրբութեան Զերոյ

ամենախոնարհ

Ս. Ոսկանեան»²⁹:

Ժամանակին ցարական Ռուսաստանի (ամահաբեր շշուռն հիւսիսայն) և սուլթանական Թուրքիայի (հողմն հարաւային) քաղաքականութիւնն ամենայն սրութեամբ քննադատած Ստ. Ոսկանյանի դեմքն այս վաւերագրում ևս առկա է, ինչպէս առկա է նաև այն Ստ. Ոսկանյանը, որ հայ ժողովրդի ազդալին ազատագրութիւնն ու փրկութիւնը տեսնում էր կրօնի ու հավատքը պահպանելու մեջ: Առանց դրանց նա չի պատկերացնում ժողովրդի հոգևոր ազատութիւնն ու անկախութիւնը: Երկու տասնամյակ հետո Ստ. Ոսկանյանի գրած վերոհիշյալ պամֆլետներում այդ ուղեգիծն ավելի հստակ ու որոշ է դրսևորւել:

Դառնանք բանաստեղծ Ստիւան Ոսկանյանին: «Աշխատանք» թերթն իր հաջորդ համարներում նույն խորագրի տակ՝ «Ստեփան Ոսկանի անտիպ զործերեն» հրատարակել է հեղինակի մի շարք բանաստեղծութիւնները, որոնք ևս առ այսօր չեն արժանացել զրականագետների ուշադրութեան:

Թերթի 1910 թ. երկրորդ համարում ղետեղւլած է Ոսկանյանի «Առջի ծաղիկ» ծավալուն (56 տող) բանաստեղծութիւնը, որ սիրո և լույսի մի ձոն է:

Երբ նոր լուսին ունէի պես
Կամարաձև կ'երեսս,
Սիրուն դեմք մը փնտոն միշտ

Եվ հոն նայե սնխնս,
Քու բաղդ անով կը բացուի
Կ'ըսե առած ուսմիկին և այլն:

²⁹ «Աշխատանք», 1910, № 1: Թերթը, որքան մեղ հայտնի է, չի հիշատակում նամակի գրութեան տարեթիւնը, որը հավանաբար 1859-ն է, (կամ թերեւ 1860 թ.): Հարց է ծագում՝ ե՞րբ և ի՞նչպէս է նախնադրանք ստացել կաթողիկոսի ուղերձը, արդո՞ւր այդ և երկուստեք հետաքրքրող ուրիշ հարցերի առթիւ (ասենք Ալվադովսկու դեմ պայքարը և այլն) նրանք հանդիպո՞ւմ չեն ունեցել (Նալբանդյանի տարեգրութեան մեջ այդ մասին որևէ նշում չկա):

Ստ. Ոսկանյանի Հաջորդ բանաստեղծությունը («Աշխատանք», 1910 թ. № 7) անվերջադիր է, դարձյալ երկարաշունչ (11 բառատող)։ Սա ևս բնության ներքող է և Լրանությունների բաղձանք։ Նա Լրագրում է այն մասին, որ սրբ-տերը բացվեն սիրալիր, որ կյանքը լինի անապակ վայելքների ծարավը հա-յեցնելու ասույթարեղ։

Թող հոսի խինդով և երգով
Թող բացուին սիրտեր սիրալիր,
Բնութին կ'ըսե.— միշտ վերժով
Դու հողի ծնունդ մի հալիր։

Մեր առջին օր մը պիտի գա
Այս փոս իր անհուն անդունդով,
Պիտի գլտորինք անգագա,
Պիտի կորսուինք սերունդով։

Երակներու մեջ նոր արին
Նռուն հիւթի պես թող հոսի,
Ոգիներ սիրով թող հարին,
Դաշտի վրա եմք, ոչ փոսի։

Բայց հիմա դաշտի վրա եմք,
Ոչ ամպ կա և ոչ մութ նշան,
Ծառ և բոյս կ'ուզին որ պարենք,
Ձոր անոյշ կու տա մեզ շուշան։

Մանր և ունայն կյտնքի շեշտը կրող այս բանաստեղծություններից հետո «Աշխատանք» իր ընթերցողներին է ներկայացրել Ստեփան Ոսկանյանի մի այլ բանաստեղծությունը, որն ավելի է ընդգծում այդ շեշտը, տալիս դժվարին ու անհեռանկար կյանքի իրական պատկերը։

Կեանքիս կեսը երբ հասա,
Ես տրամագիծ և տկար,
Կանգ մը առնույ ուզեցի
Որպես ուղուց ցավագար։

Դեռ բարի, զառ ի վեր,
Կարծես կ'ըսեք բերնով սուտ։—

Մինակ էի սարի վրա,
Ձուս դին կային ծառ և բոյս,
Մաքուր առու մեկ փապե
Հոսնուելով կու տար խոյս։

«Ավելի դիւրին է իջնել,
Աշխատե որ չի սահես,
Եթե վիհին հասնիս մօտ՝
Ծառին միայն վստահես։

Կը թելադրեք դառի վայր,
Որ կրթնիլով իջնիմ շուտ,

Այս մեր կեանք է ելեւէջ,
Ապագա իմ զառ ի վայր,
Կունակիս քով՝ զառ ի վեր,
Ներկա ունիմ մեկ քարայր»³⁰։

Պետք է ենթադրել, որ «Աշխատանքի» խմբագրի ձեռքի տակ եղել են այն հարյուր բանաստեղծությունները, որոնք տեսել էր «Սուրհանդակի» խմբագրի-րը։ Անշուշտ, նա ընտրությամբ է հրատարակել Ոսկանյանի անտիպ գործերը։ Թերևս դա արել է հրապարակախոս-բանաստեղծի եղբայրը։ Դժվար է որոշել մեկի կամ մյուսի միտումը, ինչպես և անհնար է գուշակել, թե նրանք Ոս-կանյանի ինչ գործերն են հրապարակ հանել, ինչը թողել։ Մի բան պարզ է՝ նրանք պետք է, որ զգուշավորություն դրսևորած լինեն. դեռևս թարմ էր հնօր-յա համբավ վայելող խմբագրի հիշատակը, սովորական թուրքիայում տիրող պայմանները բնավ նպաստավոր չէին ուզած խոսքը հրապարակելու համար,

³⁰ Նույնը, 25։

իսկ Ոսկանյանի հին ու նոր հակառակորդներից շատերը դեռ չէին մոռացել «առանց ձեռնոցի» հարվածող խմբագրին:

Զի բացառվում, որ «Աշխատանքի» հրապարակած Ստ. Ոսկանյանի գործերը ինչ-որ արձագանք են ունեցել. թերևս նաև ոմանց հուզել: Համենայն դեպս «Աշխատանքը» շուտով ընդհատել է Ստ. Ոսկանյանի անտիպ երկերի լույս ընծայումը և, որքան մեզ հաջողվեց պարզել, դրանց վերադարձել է միայն մոտ երկուսուկես ամիս հետո: Թերթի հաջորդ տարվա (XV 39) համարներից մեկում նորից է երևացել ծանոթ խորագիրը: Այս անգամ հրապարակվել է Ոսկանյանի մի անվերնագիր բանաստեղծությունը (50 տող), որի տակ, ի տարբերություն նախորդների, գրված է գրության թվականը՝ «1866»: Դա մի պարահանդեսի չափածո նկարագրություն է:

Ստ. Ոսկանյանի այլ ստեղծագործություններ, որ հրապարակված չլինեն նրա մահվանից հետո, մեզ հայտնի չեն³¹: Բայց բերված փաստերն իրավունք են տալիս ենթադրելու, որ հետևողական պրպտումները կարող են հասնել անակնկալների հանգեցնել: Զի բացառվում նաև Ստ. Ոսկանյանի ձեռագրերի հայտնաբերման հնարավորությունը: Դա թերևս կօգնի ամբողջացնելու Ստեփան Ոսկանյանի դիմաստվերը, պատասխանելու անորոշ մնացող այն հարցերին, առանց որոնց անհնար է ամբողջ ձայնով խոսել անցած դարի արևմտահայ իրականության առավել նշանակալից դեմքերից մեկի մասին:

ПО СЛЕДАМ... СТЕПАНА ВОСКАНИЯНА

М. Н. АКОПЯН

Р е з ю м е

Многое еще не выяснено в творческой биографии видного прогрессивного публициста-мыслителя Степана Восканяна (1825—1901), хотя и исследователи не раз делали попытку обобщить его бурную деятельность. В частности, не изучено творческое лицо Восканяна—поэта.

В статье приводятся ряд новых фактов из жизни Степана Восканяна, вводятся в научный оборот некоторые его стихотворные сочинения, до сих пор остававшиеся неизвестными («Жить или умереть», «Старое вино», «Первый цветок» и т. д.), а также письмо публициста от 1859 г. в ответ на послание католика армян.

На основе изложенных фактов в статье делается вывод, что небезуспешными будут исследовательские поиски неизвестных трудов Степана Восканяна, а также издававшихся им журналов и газет, в частности «L'Italie» (1861), «La Reforme» (1867—1901).

³¹ Ժամանակի մամուլի էջերում հիշատակություններ կան, որ Ոսկանյանի բանաստեղծություններն արտասանվում էին հանդիսավոր հավաքություններին: Օրինակ, Իգմիրլյանի Զմյուռնիա այցելության ժամանակ «շքասեղանին հայերեն բանաստեղծություն մը ըրավ Պուպլի Լֆենտի և Ս. Ոսկանի մեկ ոտանավորը արտասանելով նմանցուց Իգմիրլյանը դիմելորի մը» («Արեւելյան մամուլ», 1908, № 34, էջ 801): Հավանաբար խոսքը «Հայ դուցազնուհի մը» պատմվածքին կցված վերահիշյալ հայրենաբաղձ բանաստեղծության մասին է: